

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ՄԻՍԻԱՆՈՒՄ ԵՐ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐՂԱՆ ԴՎԹՅԱՆԸ

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանն աշխատանքային այցով եղավ Միսիանում: Միսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի հետ Վարդան Դավթյանն այցելել է Միսիանի արվեստի դպրոց, որտեղ քննարկվել են շենքային պայմաններին առնչվող հարցեր: Դպրոցը վերջին տարիներին բազմաթիվ հաջողություններ է ունեցել հանրապետական և միջազգային մրցույթփառատոներում: Վ. Դավթյանը խոստացավ դպրոցի սաներին աջակցել պարային հագուստների ձեռքբերման հարցում:

Մարզպետի տեղակալի հաջորդ կանգառը <<Միսիանի մանկապատանեկան մարզադպրոց>> ՊՈԱԿ-ում էր: Մարզադպրոցի տնօրեն Աղվան Հակոբյանը ներկայացրել է դպրոցի կենսագրությունը, ծանոթացրել ձեռքբերումներին: Վարդան Դավթյանն այցելել է նաև Միսիանի թիվ 2 հիմնական դպրոց, շրջայց կատարել, ծանոթացել սանիտարահիգիենիկ պայմաններին: Կրթօջախի տնօրեն Հրանտ Ազարումյանի հետ քննարկել են խոհանոցային բլոկի բարեկարգման հետ կապված հարցեր՝ կրթօջախի երեխաներին տաք սննդով ապահովելու համար բազային ճաշարան ստեղծելու նպատակով: Վ. Դավթյանը հետաքրքրվեց նաև դպրոցում գործող քիմ-բոքսինգի խմբակի հաջողություններով՝ պատրաստակամություն հայտնելով աջակցել մարզական գույք ձեռքբերելու հարցում:

Այնուհետև մարզպետի տեղակալը եղավ Միսիանի թիվ 4 հիմնական դպրոցում: Շրջայցից հետո կրթօջախի տնօրեն Նաիրա Ստեփանյանը ներկայացրեց դպրոցի գրեթե խարխլված վիճակում գտնվող մարզադահլիճը, ուր խոնավության պատճառով անհնար է դարձել դասապրոցեսի պատշաճ կազմակերպումը: Այցի շրջանակում Վ. Դավթյանը ծանոթացավ նաև Միսիան համայնքում իրականացվող պետական և համայնքային ծրագրերի ընթացքին:



